

Փոքրիկ շրջանը տեղավորված է Փամբակի հովտում, որով անցած առևտրական ճանապարհի հանգույցներից մեկում բացվել է ժայռափոր համալիր (կացարաններ, իջևանատուն, եկեղեցի), որը մեծապես վնասվել է 1988 թ. երկրաշարժից:

Սպիտակի, Շիրակի, Գուգարքի գերեզմանոցներում անհամար են 1988.7.XII նշահամարով ողբերգական տապանագրերը:

966. ՏԱՊԱՆԱՔԱՐ. Սպիտակ քաղաքի գերեզմանոցում, Գարիկ և Գոհարիկ Հայրապետյան նահատակների տապանագիրը, որը կրկնում է թումանյանական մրմունջը.

Քույր և եղբայր իրար կից.

Հավերժական լուռ դրկից.

Խորհում էին իրար հետ՝

Թե ինչ տարան աշխարհից:

967. ՏԱՊԱՆԱՔԱՐ. Նույն գերեզմանոցում, 13-ամյա Գնելի ծնողների հոգեթով խռովքը.

Ո՞վ կդիմանար այսքան ցավերի,

Քեզ ի՞նչ ենք արել, Ամենավերին,

Որ սև սարի պես ընկար մեր գլխին...

968. ՏԱՊԱՆԱՔԱՐ. Նույն գերեզմանոցում, 14-ամյա Աշոտ Սարգսյանի մոր կարոտագին հեծեծանքը.

Ինչքան էլ քեզ ծաղիկներ բերեմ՝

Ոչ մեկի բույրը քեզ չի հասնելու,

Հովերի չափ էլ հողդ համբուրեմ՝

Սրտիս մրմուռը քեզ չի հասնելու:

Ծանոթ. Երկրաշարժի նահատակների տապանագիր բանաստեղծություններն ու պատկերագրական մանրամասները մի ամբողջ հատոր կարող է կազմել, որում խտացած է ժողովրդի պոռթկումն ու բողոքը բնության, մահվան սև ուրվականի հանդեպ: Նրա խոհափիլիսոփայական մտորումները, պատասխան չտրվող մահվան առեղծվածը:

ԱՐՋՈՒՏ

969. ՔԱՌԱԿՈՂ ԿՈԹՈՂ. Նիստին, 3 տող.

ՍԱՅԷ
ԽԱՉՍ
ԱՋԵՄԱ

ՍԱՅ Է
ԽԱՉՍ
ԱՋԵՄԱ:

Ծանոթ. Կոթողի բեկորը և այն պսակող քանդակագարդ թևավոր խաչի կտորները հայտնաբերվել են գյուղամիջյան Ս. Գևորգ խաչածն հատակագծով կենտրոնագմբեթ եկեղեցու փլատակներից: Շրջանակի հավասարաթև խաչը, տառերի հնագրական ձևերը բնորոշ են VI-VII դարերին և եկեղեցու ժամանակակիցն են կամ թե՛ նախորդել են նրան:

Գուգարքում մեծ թիվ են կազմում IV-VII դդ. քվագրվող, բազմաբնույթ գարդաքանդակներով բառակալով կոթողները, սակայն առանց գրավոր հիշատակագրության: Արջուտի թերատված կոթողն այս իմաստով (և քանդակներով) եզակի դիպված է, որին գալիս են լրացնելու ճոճկանի, Աբորու և Արդվիի արձանագիր կոթողները:


Ճարտարապետ Վահագն Գրիգորյանը եկեղեցին թվագրում է VI դ. առաջին կեսով (տես նրա Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեք փոքր հուշարձանները, Երևան, 1982, էջ 33-35):

ԳՈԳԱՐԱՆ

Գյուղը գտնվում է Սպիտակ քաղաքից 12 կմ հյուսիս-արևմուտք, Բագումի լեռնաշղթայի հարավային ստորոտում, «ալպիական մարգագետիններով» հարուստ, ծորերով ու սարերով շրջապատված արգավանդ ու գեղատեսիլ մի վայրում: Գյուղը 1988 թ. երկրաշարժից առավել տուժած բնակավայրերից է և անցած 20 տարիների ընթացքում աստիճանաբար բուժում է իր վերքերը: Բնակավայրը և նրան հարող շրջակա տարածքները հարուստ են պատմամշակութային հուշարձաններով: Դրանք միջին և ուշ բրոնզի, վաղ երկաթի դարաշրջանների բազմաթիվ բնակատեղիներ են, դամբարանադաշտեր ու սրբատեղիներ, միջնադարյան ամրոց, արհեստական քարանձավներ, գյուղատեղիներ:

Գոգարանը գրավոր աղբյուրներում չի հիշատակվում, սակայն ճարտարապետական կոթողային հուշարձանների և նյութական մշակույթի այլ մնացորդների առկայությունը տարածքում՝ խոսում է տեղում վաղմիջնադարյան բնակավայրի գոյության օգտին, որն ամենայն հավանականությամբ Գնթունիների նախարարական տանն է պատկանել, ինչի վկայություն է Գնթունիների շառավիղների X-XI դդ. արձանագրված տապանաքարերի առկայությունը եկեղեցու բակում:

970. Տապանաքար. երկանք, եկեղեցու արևմտյան մուտքի առաջ, հարավային լանջին, 2 տող.



... ԳՆԹՈՒՆԻ ՄԱՆԿԻԿ
... ԱՊԵՂ ԳՆԱՏԻ:

Չրատ. Գ. Սարգսյան, Վիճագրագիտական էքզզներ, Պատմաբանասիրական հանդես, 2008, 2, էջ 202-204:

Ծանոթ. Տապանաքարի ծախ կեսը կոտրված է: Դատելով մատենագրական վկայություններից՝ Ագաթանգեղոս, Բուզանդ, Դրասխանակերտցի, «մանկիկ» բառերով արտահայտվել է արական սեռի երեխա իմաստը: Ըստ այսմ, մեր տապանագրում հիշված է Գնթունյաց տոհմին պատկանող տղա երեխա:

Չենք բացառում բառի օգտագործումը որպես անձնանուն:⁹¹ Անվան հնագույն վկայությունը պահպանվել է Տաթևի 844 թ. կալվածագրի վկաների ցուցակում. «Մանկիկ՝ Ծղկաց քորեպիսկոպոս»:⁹² Հ. Աճառյանը նշում է ևս մի Մանկիկ(երեց), որը 1262 թ. Բագնայրի վանքին կալվածքներ ու ձեռագրեր է նվիրել:⁹³

⁹¹ Այս միտքը հուշեց հնագետ-մշակութաբան, պ.գ.դ. Հ. Պետրոսյանը:

⁹² Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն Մահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 208:

⁹³ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Եր., 1946, էջ 202-203: